Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

336.3
4-21

Պատճեն

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ՊԵՏՎԱՐԿԻ ՅԵՎ ԽՆԱՅՈՂԱԿԱՆ ԳՈՐԾԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՀՐԱՀԱՆԳԻՉՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հրատարակվում և «խնայողական դրամարկղների աշխատանքի վերաբերյալ» ԽՍՀՄ Ժողկոմխորհի 1931 թ. փետրվարի 1-ի վորոշման 2-րդ կետի լու «գ»-ի հիման վրա

1. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՀՐԱՀԱՆԳԻՉՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ.—

1. *Խնայողական գործի և Պետվարկի հասարակական հրահանգիչներն ընտրվում են, նպատակ ունենալով ընդգրկելու ֆինանսական ապարատի աշխատանքներում հարվածայիններին, առաջավոր բանվորներին և կոլտնտեսականներին, վերջինների ակտիվ մասնակցությամբ աշխատավորների մասսայական կուտակումների կազմակերպմանը, սոցիալիստական շինարարության հսկա ծրագիրը կատարելու, սոցիալիստական հասարակության կառուցումը ԽՍՀՄ-ում ավարտելու համար:*

ՀՍԽՀ — ССРА
им. А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ
15677-57

17 MAY 2013

II. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՀՐԱՀԱՆԳԻՉՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

2. Հասարակական հրահանգիչների կազրերը կազմակերպվում են պետավարկին և խնայողական գործին ոժանդակող բոլոր հանձնաժողովներին՝ գործկոմներին խորհուրդներին (գյուղական, շրջանային, քաղաքային, նահանգային և յերկրային) և թե ստորին հանձնաժողովներին կից (հիմնարկներում, ձեռնարկներում, խորհրդային մնտեսություններում, կոլխոզներում և այլն։)

Հասարակական հրահանգիչներ գտնվում է նաև միութենական և ինքնավար հանրապետությունների կենտրոնական գործադիր կոմիտեներին կից ոժանդակող կենտրոնական հանձնաժողովներին և ԽՍՀՄ Կենտգործկոմի նախագահության կից ոժանդակող կենտրոնական հանձնաժողովին կից։

3. Ստորին ոժանդակող հանձնաժողովներին կից հասարակական հրահանգիչները գտնվում են ըստ իրենց աշխատանքի վայրի, խնայողական գործին և պետավարկին ոժանդակող հանձնաժողովների տրամադրության տակ և հաշվի յեն առնվում վերջիններիս կողմից։

4. Տվյալ ոժանդակող հանձնաժողովին կից գտնվող հասարակական հրահանգիչների անմիջական գործունեության ղեկավարությունը դրվում է համապատասխան հանձնաժողովի անդամի վրա, վորը նշանակվում է հանձնաժողովի հատուկ վորոշմամբ. գործկոմներին և խորհուրդներին կից պետավարկին և խնայողական գործին ոժանդակող ղեկավարող հանձնաժողովները միացնում են բոլոր ողակների ոժանդակող հանձնաժողովներին կից հասարակական հրահանգիչների գործունեությունը։

Այդ նպատակի համար, քաղաքում հասարակական հրահանգիչների թիվը մեծ լինելու դեպքում, կարող են կազմակերպվել քաղխորհրդի կից պետավարկին և խնայողական գործին ոժանդակող հանձնաժողովին կից հասարակական հրահանգիչների բյուրո, վորպիսին գլխավորում է ոժանդակող հանձնաժողովների անդամներից մեկը։ Բյուրոն ընտրվում է բոլոր հասարակական հրահանգիչների համաքաղաքային ընդհանուր ժողովի կողմից։

Այդ բյուրոներն իրականացնում են նաև, հասարակական հրահանգիչների կողմից իրենց պարտականությունների և նրանց վրա դրվող առանձին հանձնարարությունների կատարման հսկողությունը։

5. Գործկոմներին և խորհուրդներին կից հասարակական հրահանգիչների աշխատանքների սպասարկումը և գործավարությունը, դրվում է պետավարկի և պետաշխնայդրամարկղների տեղական մարմինների վրա։

III. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՀՐԱՀԱՆԳԻՉՆԵՐ ԱՌԱՋԱԴՐԵԼՈՒ ՑԵՎ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԿԱՐԳԸ

6. Կենտրոնական գործի և Պետական վարկի հասարակական հրահանգիչներ կարող են լինել ոժանդակող հանձնաժողովի ակտիվիստները (դրանց թվում ոժանդակող հանձնաժողովի անդամները) (առաջավոր բանվորները) առաջին հերթին հարվածայինները, կոմյերի-

17 FEB 2010

17892

տականներ, կոլխոզնիկ ակտիվիստները, ծառայողները–պրոֆեսիոնալ ակտիվի կազմից, ինչպես և խորհրդային ինտելիգենցիայի հասարակական աշխատավորների առանձին ներկայացուցիչները:

Խնայողական գործի և պետական վարկի հասարակական հրահանգիչների պարտականությունների կատարման մեջ լայն կերպով ընդգրկվում են կանայք:

7. Խնայողական գործի և պետական վարկի հասարակական հրահանգիչը կարող է ընտրվել անմիջականորեն այն հիմնարկ–ձեռնարկի բանվոր ծառայողների կոլեկտիվում ուր ինքն մշտական աշխատում է, նաև կոլխոզների և առանձին կուսակցական պրոֆեսիոնալ միությունների և հասարակական կազմակերպությունների կողմից:

8. Հիմնարկ–ձեռնարկների կոլեկտիվների և կոլխոզների կողմից հասարակական հրահանգիչներն առաջարկվում են բանվոր–ծառայողների և կոլխոզնիկների ընդհանուր ժողովների միջոցով, վորտեղ քննության են առնվում հասարակական հրահանգիչների թեկնածությունները:

9. Առաջադրվող հասարակական հրահանգիչների թեկնածությունները, խնայողական գործին և պետական վարկին ոժանդակող ղեկավար հանձնաժողովների միջոցով մտցրվում են համապատասխան տեղական գործկոմները և խորհուրդները և հաստատվում վերջինների նախագահությունների կողմից:

10. Պետական վարկի և խնայողական գործի հասարակական հրահանգիչներն ընտրվում և առաջադրվում են այնքան ժամանակի համար, վորքան ժամանակ ընտրված են այն ոժանդակող հանձնաժողովները, վորոնց նրանք կցված են: Հասարակական հրահանգիչների անգործության դեպքում, համապատասխան ոժանդակող հանձնաժողովը կարող է հարց հարուցել ղեկավար հանձնաժողովի միջոցով տեղական գործկոմների կամ խորհուրդների առաջ, տվյալ հասարակական հրահանգիչին այդ կոչումից ազատելու համար, միաժամանակ տեղեկացնելով, այդ հասարակական հրահանգիչին առաջադրած կոլեկտիվին կամ կազմակերպությանը:

11. Տեղական գործկոմների կամ խորհուրդների կողմից հաստատված պետական վարկի և խնայողական գործի յուրաքանչյուր հասարակական հրահանգիչը, տեղական ոժանդակող ղեկավար հանձնաժողովի կողմից, ստանում է վկայական իր կոչման մասին:

IV. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՀՐԱՀԱՆԳԻՉՆԵՐԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՑԵՎ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ

12. Հասարակական հրահանգիչը հանդիսանում է խնայողական գործի խնդիրներում, հարվածային, սոցիալիստական մրցման կազմակերպիչ՝ թե իր կազմակերպության ներսում և թե ուրիշ կազմակերպությունների մեջ:

Սոցիալիստական մրցման միջոցները կյանքում կիրառելիս, հասարակական հրահանգիչը մասնավորապես կատարում է հետևյալ պարտականությունները՝

ա) տանում է մշտական ագիտ–բացատրական աշխատանք աշխատավորների մեջ խնայողական գործի և պետական փոխառությունների գծով: Դրա համար նա կազմակերպում է և անցկացնում զրույցներ իր ցեխում գործարանի, կոլտնտեսության, իր ակումբում, խրբ-

ճիթ-ընթերցարանում և այլն: Պարբերաբար մոտավորապես ամսական մեկ անգամ հասարակական հրահանգիչը կազմակերպում է նույնպես զրույցներ յուր բնակչինկետի բնակիչների առանձին խմբերի մեջ:

բ) մասնակցում է ակտիվ կերպով խնայդրամարկղներն ավանդներ ներգրավելու և պետական փոխառության իրացման բոլոր կամպանիաներին: Հասարակական հրահանգիչը հանդիսանում է իր ձեռնարկում կամպանիաների լայն ծավալման գլխավորողը ոգնելով, իր ոժանդակող հանձնաժողովին ապահովելու բանվոր-ծառայողների, կոլխոզնիկների փոխառության բաժնեգրության 100 %-ին ներգրավումով նրանց խնայումների լիովին ընդգրկումը խնայողական դրամարկղներում:

Կամպանիաների ժամանակ հասարակական հրահանգիչը կազմակերպում է ոժանդակող հանձնաժողովի հետ միասին մասսայական ժողովներ, կոնֆերանսներ, ըստ հնարավորության, հանդես է գալիս այդտեղ կամպանիայի մասին զեկուցումներով, հետևում է փոխառության բաժնեգրության արագ ձևակերպելուն և ոգնում է այն գործում իր ոժանդակող հանձնաժողովին:

գ) Հասարակական հրահանգիչը կատարում է զանազան տեղեկություններով պարտատոմսատերերին սպասարկելու աշխատանքը, վորի համար տանում է ոժանդակող հանձնաժողովի կողմից սահմանված հերթապահություններ իր ձեռնարկում, ակումբում, պետվարկի անկյունում և այլն, մասնավորապես տալիս է տեղեկություններ շահումների մասին, ստուգելով իրեն ներկայացվող պարտատոմսերը կամ ամրացման տալոնները—վճարահանության աղյուսակներով:

դ) Հասարակական հրահանգիչը խթան է հանդիսանում ոժանդակող հանձնաժողովների աշխատանքների հետազոտմանը: Ստուգում է ընդգրկված են արդյոք փոխառության մեջ տվյալ ձեռնարկի բոլոր բանվոր-ծառայողները և կոլխոզի բոլոր կոլխոզնիկները, ձևակերպված է արդյոք լրիվ կերպով փոխառության բաժնեգրությունը, ժամանակին են կատարվում պահումները և չի մնում արդյո՞ք գանձված գումարները հիմնարկներում, ցուցաբերում է արդյոք ակտիվություն տվյալ ոժանդակող հանձնաժողովն իր աշխատանքի մեջ, ինչպես է նա սպասարկում պարտատոմսատերերին, տարվում է արդյոք տվյալ հիմնարկում ու ձեռնարկում կոլխոզում մշտական ագիտ բացատրական աշխատանք, տեղական փոխառությունների կամ խնայողական դրամարկղների վերաբերյալ: Հետազոտելով ոժանդակող հանձնաժողովները, հասարակական հրահանգիչը միաժամանակ հրահանգներ է տալիս նրան և խնդիր է դնում տեղական հասարակական կազմակերպությունների առաջ աշխուժացնելու ոժանդակող հանձնաժողովի գործունեությունը:

յե) Հասարակական հրահանգիչն ոգնում է ոժանդակող հանձնաժողովին նրա աշխատանքների մեջ՝ պետական փոխառությունների պարտատոմսերի վրա կարգադրություններ անելու հասարակական հսկողության վերաբերյալ: Ոժանդակող հանձնաժողովի հանձնարարությամբ հասարակական հրահանգիչը կատարում է նախնական հետազոտություն պարտատոմսատիրոջ կողմից արված միջնորդության նկատմամբ պարտատոմսերը ծախելու կամ գրավ դնելու համար: Հետևում

և ոժանդակող հանձնաժողովի կողմից տրված թույլտվությունների ճիշտ ձևակերպմանը:

Հասարակական հրահանգիչը ստուգում է նույնպես ժամանակին և լրիվ են արդյոք պահվում պարատոմսատերերի կողմից ոժանդակող հանձնաժողով թույլատվությամբ ստացված փոխառությունների դիմաց մուծումները:

13· Հասարակական հրահանգիչը տանում է մշտական պայքար դեպի ֆինանսա-վարկային խնայողական ապարատ դոյություն ունեցող բոլոր տեսակի բյուրոկրատական արտահայտությունների և սովորությունների դեմ, հայտնաբերում և այդ աշխատանքներում դոյություն ունեցող բացերը, մատնելով այդ աշխատանքների մեջ հասարակական մեթոդը, ներդրծում է լավացնելու պետական փոխառությունների բաղմամիլիոն բաժանորդներին և խնայողական դրամարկղների ավանդատուներին սպասարկելու վորակը:

Դրա համար հասարակական հրահանգիչը մասնակցում է խնայողական դրամարկղների և վարկային հիմնարկների հետաղոտման ու ստուգման աշխատանքներին: Նայում ու քննում է առանձին ավանդատուների ու պարատոմսատերերի բողոքները այդ աշխատանքներում, կապ պահպանելով ԲԳՏ—յան բողոքների բյուրոյի հետ:

Վարկային աշխատանքների և խնայողական ապարատի աննորմալությունների վերաբերյալ թերթում լույս տեսնող բանթղթակիցների և գյուղթղթակիցների հոդվածների հիման վրա անց և կացնում հետաղոտություններ, համառորեն պայքարելով իր կողմից հայտնաբերվող բյուրոկրատիզմի և վարչակիտայի բոլոր փաստերի դեմ:

Խնայողական դրամարկղների հետաղոտման ժամանակ հասարակական հրահանգիչը պարզում է նաև խնայողական դրամարկղի աշխատանքների և նրա կողմից ավանդատուների սպասարկման պայմանները, հատուկ ուշադրություն դարձնելով չեկի հարմարության վրա, ունի արդյոք խնայողական դրամարկղը բավականաչափ քանակով զործառնական նյութեր և այլն, և նմանապես այն հանգամանքի վրա չկան արդյոք հերթեր դրամարկղում:

14· Հասարակական հրահանգիչը իրավունք ունի անցնելու իր շրջանի բոլոր խնայողական դրամարկղները ու այլ վարկային հիմնարկները և պահանջելու իր կողմից կատարվող հետաղոտության կամ պարզող խնդրի հետ կապված նյութեր:

Ոժանդակող դեկավար հանձնաժողովները ամրացնում են իրեն տրամադրության տակ դնվող հասարակական կազմակերպիչներին վորոշ խնայողական դրամարկղներին դրանց մշտական սպասարկելու և հսկելու աշխատանքներին:

15· Այցելվող խնայողական դրամարկղներում ավանդատուների և պարատոմսատերերին սպասարկման մեջ աննորմալություն եր և թերություններ հայտնաբերելիս, հասարակական հրահանգիչը վերացնում է այդպիսիք անմիջապես տեղի խնայողական դրամարկղի վարչության միջոցով:

Վարչությունը հրանհանգչի հետ չհամաձայնվելու դեպքում հրահանգիչը խնդիրն անց է կացնում ծառա-

յողների տեղական կոմիտեյի միջոցով, կամ հանձնում է այդպիսին ոժանդակող ղեկավար հանձնաժողովին:

16. Խնայողական դրամարկղների հետազոտության հետ կապված յուր աշխատանքներում, հասարակական հրահանգիչը պարտավոր է խիստ կերպով պահպանել ավանդների նկատմամբ որենքով սահմանված գաղտնապահությունը և իրավուք չունի խառնվելու աշխատավորական խնայդրամարկղների գլխավոր վարչության կողմից սահմանված կանոնների և կարգադրությունների համաձայն դրամարկղների գործնական աշխատանքների մեջ:

— Ծանոթություն.— Ոժանդակող հանձնաժողովն իրեն կցված հասարակական հրահանգչից վերցնում է համապատասխան ստորագրություն ավանդների գաղտնապահությունը պահպանելու մասին:

17. Հասարակական հրահանգիչը ոգնում է ոժանդակող հանձնաժողովին իրականացնելու հասարակական հսկողությունը. Նույնպես մյուս կազմակերպությունների և հիմնարկների վրա (բացի Ֆինանսավարկային և խնայողական ապպարատից) Վորոնք ներդրավում է պետական վարկի աշխատանքների մեջ: Դրա համար նա մասնակցում է կազմակերպությունների հետազոտմանը ձգտելով վորպեսզի վերջիններս կատարեն կուսակցության և կառավարության դիրեկտիվները պետական վարկի և խնայողական գործի բնագավառում:

18. Հասարակական հրահանգիչը հանդիսանում է կենտրոնական և տեղական թերթերի մշտական թղթակիցը պետփոխառությունների և խնայողական դրամարկղների միջոցով միջոցների մոբիլիզացիայի հարցերում: Նա նույնպես հետևում է վորպեսզի այդ հարցերը սիստեմատիկ կերպով լուսաբանվեն իր. ձեռնարկի պատի կամ բազմատիրաժ թերթերում:

Ցուրաքանչյուր հասարակական հրահանգիչ կապվում է ԽՍՀՄ ԿԳԿ—ի նախագահության և ԽՍՀՄ ՖԺԿ—ին կից կենտրոնական ոժանդակող հանձնաժողովի «Աշխատավորական խնայումները սոցիալիստական շինարարության համար» Բյուլլետենի և միութենական ՖԺԿոմատի «Ֆինանսները և սոցիալիստական տնտեսության» ամսագրի խմբագրության հետ, դառնում մամուլի թղթակից և ստանում է այդպիսիք այն խնայողական դրամարկղի միջոցով, վորին ինքը կցված է:

19. Հասարակական հրահանգիչը ինիցիատիվայի կարգով կարող է մտնել ոժանդակող ղեկավար հանձնաժողովի մեջ պետական փոխառությունների և խնայողական գործի ու աշխատավորների, խնայդրամարկղների սպասարկման աշխատանքների բնագավառի լավացման հետ կապված նախագծերով ու առանձին առաջարկություններով:

20. Հասարակական հրահանգիչն իր աշխատանքներում հաշվետու է պետվարկին և խնայողական գործին ոժանդակող այն հանձնաժողովի առաջ, վորին նա կցված է, իսկ պարբերաբար յերեք ամիսը վոչ պակաս քան մեկ անգամ հաշվետու է նույնպես իրեն վորպես հասարակական հրահանգիչ առաջադրած կոլլեկտիվի կամ կազմակերպության առաջ:

2. Իր աշխատանքներում ակտիվություն ցուցաբերելու և իր վրա դրված պարտականությունները ավելի լավ կատարելու համար, հասարակական հրահանգիչը պարգևատրվում է: Հասարակական հրահանգչին

27975

պարգևատրվելու հարցը հարուցվում է պետվարկին և խնայողական գործին օժանդակող համապատասխան հանձնաժողովի կողմից:

22. Խնայողական գործի և պետվարկի հասարակական հրահանգիչն այդ աշխատանքը կատարում է հասարակական բեռնավորման կարգով: Խնայողական գործի և պետվարկի հասարակական հրահանգչի պարտավորություններ տանելը հանդիսանալով հասարակական լուրջ ֆունկցիա համարվում է հասարակական հրահանգչի համար, վորպես հիմնական բեռնավորում, հասարակական—պրոֆմիութենական աշխատանքների գծով:

ԽՍՀՄ ԿԳԿ-ի Նախագահության կից՝ խնայողական գործին և պետվարկին օժանդակող կենտրոնական հանձնաժողովի նախագահ՝ ԶՈՒՅԿԱՅԵՎ

ԽՍՀՄ ՑԺԿ-ի տեղակալ՝ ԳԵՆԿԻՆ

Համաձայնեցված է ՀԱՄԿԽ—ի հետ:

Гос. Публ. Библиотека ՀՍԽՀ – ССРА им. А. Мясникяна Ա. Մյասնիկյանի անվան

ՀՀ Ազգային գրադարան
NL0208393

Պետհրատի տպարան. գլավլիտ 6617 (բ) պատ. 3444 տիրաժ 2000